ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2 ԱՊՐԻԼԻ 2017Թ.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2017

«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ավտոմատացված համակարգի նպատակն է ապահովել ընտրությունների նախապատրաստմանը, կազմակերպմանը և անցկացմանը առնչվող խնդիրների և քվեարկության ու ընտրությունների արդյունքների ամփոփման ավտոմատացումը:

Մուտք համակարգ

Ընտրություններ ավտոմատացված համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է կանչել Ընտրություններ ավտոմատացված համակարգը (ԸԱՀ): Դրա համար համակագիչի աշխատանքային սեղանից (desktop) պետք է ընտրել և բացված պատուհանում մուտքագրել անունը և ծածկագիրը, մուտք գործել ԸԱՀ:



Ձևավորված ընտրության դիմելը

Ընտրությանն առնչվող տվյալներ մուտքագրելու համար անվանացանկի «ֆայլ» բաժնից ընտրեք «Ընթացիկ ընտրությունների ցանկ» կետը: Բացված «Ընտրությունների ցանկ» պատուհանից նշեք Ազգային Ժողովի ընտրությունը և սեղմեք Ընտրել կոճակը կամ մկնիկի երկու սեղմումով ակտիվացրեք ընտրված ընտրությունը: Կբացվի Ազգային Ժողովի ընտրության պատուհանը.



Ընտրության պատուհանի վերևում նշվում է ընտրության տեսակը, անվանումը և օրը:

Նախապատրաստական աշխատանքներ

«Ընտրություններ» ավտոմատացված համակարգն աշխատում է յուրաքանչյուր ընտրության կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն:

ՈՒստի յուրաքանչյուր գործողություն պետք է կատարել Ազգային Ժողովի ընտրության ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածում:

Ազգային Ժողովի ընտրությունների ժամանակ համակարգի նախապատրաստական բաժնի տվյալները մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան աշխատակիցների կողմից:

Ընտրական տեղամասերի, տեղամասային կենտրոնների տվյալների մուտք



Տեղամասերի վերաբերյալ տեղեկությունները մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրության ձախ կողմի անվանացանկի նախապատրաստական բաժնից ընտրել Ընտրական տեղամասեր կետը և բացված պատուհանում լրացնել անհրաժեշտ տվյալները:

դաշտում լրացվում է միայն տեղամասի հերթական համարը՝ 1, 2 և այլն:

Նորույթ

Խոշորացման արդյունքում ստեղծված համայնքների տեղամասերը մուտքագրելիս համակարգը կպահանջի նշել բնակավայրը: Առանց այդ նշումի համակարգը թույլ չի տա պահպանել տեղամասի տվյալները:



ՈՒշադրություն

- ***<u>Տեղամասերի մուտքագրումն իրականացվում է տեղամասային կենտրոնները կազմավորվելուց, սահմանվելուց և հերթական համարները սահմանելուց հետո: Տեղամասերը մուտքագրվում են հերթականությամբ 1, 2, 3 և մինչև վերջինը: Ընտրողների թվերն ըստ տեղամասերի մուտքագրվում են լիազոր մարմնի կողմից այդ տվյալները քվեարկությունից 50, 10 և 6 օր առաջ տրամադրելուց անմիջապես հետո:</u>***

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների տվյալների մուտքագրումը և տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման մասին որոշման ստացումը



Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակվող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները մուտքագրելու համար անհրաժեշտ է անվանացանկի «Ֆայլ» բաժնից ընտրել «ՏԸՀ անդամներ» կետը: Արտապատկերված պատուհանում ներկայացվում են ընտրված ժամանակատվածում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վերաբերյալ տվյալներ:

Այստեղ երևում են նաև կուսակցությունների կողմից համապատասխան հայտերով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները:

Այս բաժնում ներդրված է համակարգ, որը հնարավորություն է ընձեռում խմբավորել տվյալները, տեսակավորել ըստ տարբեր դաշտերի, որոնել ըստ անհրաժեշտ տեղեկության: Այդ նպատակով անհրաժեշտ է վերնագրի տողատակի համապատասխան դատարկ վանդակներում լրացնել փնտրվող տվյալները կամ ընտրել անվանացանկից կամ տեսակավորել ըստ անհրաժեշտ տվյալների վերնագրի տողի համապատասխան վանդակի վրա մկնիկի աջ ստեղնի սեղմումով:

Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակվող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրել կոճակը և լրացնել տվյալները բացված պատուհանի համապատասխան վանդակներում:



Ինչպես երևում է ներկայացվածից ընտրական տարածքում կարելի է մուտքագրել միայն տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից ներկայացված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները:

Ներկայացված պատուհանում լրացվում են միայն տեղամասի համարը, համայնքը և ՏԸՀ անդամի վկայականի համարն ու հեռախոսահամարը, իսկ ազգանուն, անուն, հայրանունը կլրացնի համակարգը: Տվյալները պահպանելու համար անհրաժեշտ է ընտրել Ավելացնել կոճակը:

Եթե ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարել են (ներկայացրել է ինքնաբացարկ և այլն), ապա ՏԸՀ անդամների ցանկի պատուհանում անհրաժեշտ է նշել այդ անդամի տողը և սեղմել մկնիկի աջ ստեղնը և բացված անվանացանկից ընտրել ինքնաբացարկ կետը: Արդյունքում համապատասխան տողում կկատարվի անհրաժեշտ գրառումը ՏԸՀ անդամի տեղը թափուր լինելու վերաբերյալ:



Թափուր տեղը համալրելու համար անհրաժեշտ է ընտրել տողը, որտեղ նշված է փոխարեն և լրացնել տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից նշանակված անդամի տվյալները, այսինքն վկայականի համարը և հեռախոսահամարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման մասին որոշումը ստանալու համար անհրաժեշտ է անվանացանկի «Ֆայլ» բաժնից ընտրել «ՏԸՀ» կազմ կետը: Արդյունքում կարտապատկերվի պատուհան, որտեղ պետք է նշել ընտրության օրը, նշել համապետական գրառումը և սեղմել [Ստանալ] կոճակը:



Եթե տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից ներկայացված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թիվը որևէ տեղամասում 2-ից ավել է, ապա համապատասխան պատուհանում կներկայացվեն այդ տեղամասերը: [1] կոճակը սեղմելու դեպքում համակարգը պատահական վիճակահանությամբ կընտրի երկու անդամի և կցուցադրի դուրս բերվող պատուհանում:





Ելք կոճակը սեղմելուց հետո համակարգը կփակի պատուհանը, և կվերադառնա նախորդ պատուհան, եթե կան այլ տեղամասեր, որտեղ անդամների թիվը 2-ից ավելի է ապա պետք է կրկնել վիճակահանությունը բոլոր տեղամասերի համար: [Ստանալ] Կոճակը սեղմելու դեպքում համակարգը կպահանջի արտահանվող ֆայլի

անվանումը և տեղը: Այն պահպանելուց հետո համակարգը հարցում կանի ֆայլը բացելու և ցուցադրելու վերաբերյալ:

Քվեարկության օրը

① *11:00-11:30*

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն քվեարկության օրը տարածքային ընտրական հանձնաժողովները 3 ժամյա պարբերականությամբ պետք է ամփոփեն, հրապարակեն և կենտրոնական ընտրական հանձնաժողով հաղորդեն ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:



Այդ գործառույթն իրականացնելու համար անվանացանկի «Ֆայլ» բաժնից ընտրեք «Ընթացիկ ընտրությունների ցանկ» կետը.

Բացված պատուհանում ընտրեք տվյալ օրվա Ազգային Ժողովի ընտրությունը:



Քվեարկության մասնակցության մասին տվյալները ԸԱՀ մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրել ընտրության պատուհանի ձախ մասի «Ընթացիկ բաժնի» «Մասնակցություն» կետը:

Արդյունքում կբացվի մասնակցության պատուհանը:



Ժամը 11:00-ի տվյալները յուրաքանչյուր տեղամասի համար լրացվում են 11:00 սյունակում, % սյունակում հաշվում է այդ ժամի դրությամբ մասնակցության տոկոսը:

ⓘ *Ուշադրություն*

<u>11:00 սյունակը ակտիվ կլինի մուտքագրման համար ժամը 11:00-ից մինչև 11:30:</u>

Բոլոր տեղամասերի տվյալները մուտքագրելուց հետո, անհրաժեշտ է արտահանել ստացված տվյալները, ***<u>տպել և փակցնել տեսանելի տեղում</u>***:



Դրա համար պետք է ընտրել «մասնակցություն» պատուհանի վերևում զետեղված կոճակը: Արդյունքում բացված պատուհանում պետք է ընտրել ընտրական տարածքի կետը և անպայման նշում կատարել ընտրական տարածքի անվանման դիմաց: Հակառակ դեպքում համակարգը կտա հաղորդագրություն նշում չունենալու վերաբերյալ: Այնուհետև պետք է

սեղմել պատուհանի ներքևի Ընտրել կոճակը: Արդյունքնում համակարգը կպահանջի ներմուծել արտահանվող ֆայլի անվանումը և հիշել այն: Խորհուրդ է տրվում ստեղծել նոր թղթապանակ (New Folder) և հիշել ֆայլը «ընտրության անուն»+«11-00» անվանումով օրինակ, New Folder-ը անվանել «ԱԺ 2017», իսկ ֆայլը՝ «ԱԺ 11_00», հետո՝ «ԱԺ 14_00» և այլն:

ⓘ *ՈՒշադրություն*

<u>Նշված տեղեկատվությունը պետք է պատրաստ լինի և տրամադրվի հանձնաժողովին մինչև ժամը 12:00-ն</u>

ԸԱՀ-ն հնարավորություն է ընձեռում ստանալ նաև նշված տեղեկատվությունն ըստ մարզերի և համայնքերի: Դրա համար վերոհիշյալ պատուհանում անհրաժեշտ է ընտրել համապատասխան կետերը:

② *14:00-14:30,* ③ *17:00-17:30,* ④ *20:00-20:30*

Իրականացվում են ① կետում նկարագրված գործառույթները՝ յուրաքանչյուր ժամին համապատասխան:

⑤ *20:00-ԻՑ ՍԿՍԱԾ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ*

Գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ է ընտրել անվացանկի «Արձանագրություն» բաժնի նախնական կետը: Արդյունքում էկրանին կարտապատկերվի ՏԸՀ արձանագրության մուտքի պատուհանը:



Տեղամաս կետից պետք է ընտրել անհրաժեշտ տեղամասը և արձանագրության թվերը լրանցնել պատուհանում նրանց համապատասխանող վանդակներում:

Դուրս բերված պատուհանում տվյալները մուտքագրվում են այնպես, ինչպես արձանագրությունում՝ ընտրողների հիմնական ցուցակի թվի մոտ մուտքագրվում է այդ ցուցակի ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ, իսկ կողքի վանդակում՝ այդ ցուցակի ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ: ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ չեն մուտքագրվում, դրանք ստացվում են համակարգի կողմից՝ գումարման ճանապարհով:



Կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների կողմ քվեարկված

քվեաթերթիկների թվերը մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրել կոճակը:



Բացված պատուհանում համապատասխան թեկնածուի դիմացի դաշտում անհրաժեշտ է լրացնել նրան կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը և վերջում սեղմել կոճակը:

Բոլոր տվյալները լրացնելուց հետո դրանք պահպանելու համար պետք է սեղմել կոճակը: Եթե արձանագրությունում կան չլրացված տվյալներ (այսինքն որևէ վանդակում առկա է 0 թիվը), ապա

համակարգը **դեղին տառերով դուրս կբերի հաղորդագրություն** դրա մասին: Մուտքագրված տվյալների միջև **անհապատասխանությունները նույն պատուհանում կարտապատկերվեն կարմիր տառերով**: Հատկապես պետք է ուշադիր լինել **կապույտ տառերով ներկայացված հաղորդագրություններին**: ԸԱՀ-ն հնարավորություն է տալիս չհիշել այդ տվյալները, նորից ստուգել մուտքագրված թվերը և վերացնել թերությունները:

Ուշադրություն

Անճշտությունների չափը հաշվարկվում է համակարգի կողմից, այն պետք է լրացնել տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության թղթային տարբերակում սահմանված տեղում:

Համակարգը չի թույլատրում փոփոխել տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության պահպանված տվյալները: Հետևաբար մինչև դրանք պահպանելը համոզվեք Ձեր մուտքագրած տվյալների ճշտգրտության մեջ և եղեք ծայրահեղ ուշադիր:

Մուտքագրված տվյալներն անմիջապես հրապարակվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական

հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնի մոնիտորներին՝ նաև ըստ առանձին տեղամասերի և ԿԸՀ կայքում:

⑥ *հաջորդ օրը ժամը 00:00-ից մինչև ժամը 14:00 աղյուսակավորում*



Հաջորդ օրը ժամը 00:00-ին և դրանից հետո ամենաուշը 3 ժամյա պարբերականությամբ պետք է իրականացնել մուտքագրված արձանագրությունների տվյալների աղյուսակավորումը: Այդ նպատակով պետք է ընտրել անվանացանկի «Ընթացիկ» բաժնի «Աղյուսակավորում» կետը:

Էկրանին կարտապատկերվի աղյուսակավորման պատուհանը:



Այս պատուհանում պետք է ընտրել ըստ ընտրական տարածքի կետը, այնուհետև նշում կատարել ընտրական տարածքի մոտ:

կոճակն ընտրելու դեպքում պատուհանի աջ մասում կարտապատկերվեն այդ պահի դրությամբ մուտքագրված բոլոր արձանագրությունների

տվյալները գումարային տեսքով:

կոճակն ընտրելու դեպքում համակարգը կպահանջի արտահանվող ֆայլի անվանումը և տեղը: Այն պահպանելուց հետո համակարգը հարցում կանի ֆայլը բացելու և ցուցադրելու վերաբերյալ: «Yes» տարբերակն ընտրելու դեպքում էկրանին կարտապատկերվի աղյուսակավորման արդյունքը: Խորհուրդ է տրվում ընտրության աղյուսակավորման տվյալների արտահանված ֆայլը պահպանել ստեղծված թղթապանակում (Folder)՝ «ընտրության անվանում»+«tab-00-00» անվանումով՝ այսինքն tab-+աղյուսակավորման ժամը: Ստացված աղյուսակները պետք է տպել և տրամադրել հանձնաժողովի նախագահին և փակցնել տեսանելի վայրում:

ⓘ *Ուշադրություն*

<u>Եթե ընտրական տարածքի բոլոր տեղամասերի արձանագրությունների մուտքագրումն ավարտվում է, ապա անմիջապես տպվում է աղյուսակավորումը և ավարտվում աշխատանքն այդ ընտրության հետ:</u>

⑦ *Վերահաշվարկի արձանագրությունների մուտք*



Վերահաշվարկի արձանագրությունների տվյալները մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրել «Արձանագրություններ» բաժնի «վերահաշվարկ» կետը: Տվյալների մուտքագրումը, ինչպես նաև դրանց ստուգումը և էկրանին դուրս բերվող հաղորդագրությունները իրականացվում են ⑤ կետում նկարագրված եղանակով:

Ժամանակացույց տարածքային ընտրական հանձնաժողովներում ԸԱՀ-ով իրականացվող գործառույթների

Տեղամասերի, տեղամասային կենտրոնների, ընտրողների թվերի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում	մինչև 20.02.17թ.
Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից նշանակվող ՏԸՀ անդամության թեկնածուների հայտերի ընդունում	մինչև 8.03.2017 մինչև ժամը 18:00
Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից նշանակվող ՏԸՀ անդամության թեկնածուների տվյալների մուտքագրում	մինչև 8.03.2017 մինչև բոլոր տվյալների մուտքի վերջ
ՏԸՀ կազմի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժովի որոշման ստացում	
ՏԸՀ նախագահի, քարտուղարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարելու, թափուր պաշտոնները համալրելու գործառույթներ	09.03.2017-ից 28.03.2017 մինչև 18.00-ն
Քվեարկության մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում	02.04.2017-ին մինչև 11.30 մինչև 14.30 մինչև 17.30 մինչև 20.30
Ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրում	02.04.2017 20.00-ից մինչև 03.04.2017 16.00-ն
Վերահաշվարկի արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրում	4.04.2017 ժամը 14:00-ից - 7.04.2017 մինչև ժամը 14:00


Համացանց
Մասուլի սրահ